ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչության գույքի կառավարման և մոնիտորինգի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 18/1-3.2-1) ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու համար դիմում են ներկայացրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ Գոհար Սամվելի Մոսյանը և Դավիթ Համլետի Սիմոնյանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 10.07.2018թ. N 792-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի համաձայն ս.թ. հուլիսի 22-ին Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնակատարի մոտ կազմակերպվել է հարցազրույց, որին ներկա են եղել Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ Ռուզան Հարությունյանը և քարտուղարության պետի պարտականությունները կատարող Արթուր Սիմոնյանը: Դավիթ Սիմոնյանը պաշտոնի անձնագրով պահանջվող համապատասխան մասնագիտական աշխատանքային ստաժ չունենալու պատճառով չի հրավիրվել հարցազրույցի,իսկ Գոհար Սամվելի Մոսյանը հրավիրված հարցազրույցի ընթացքում գործառույթները ներկայացնելուց հետո հրաժարվել է:

Արդյունքում ներկայցված անձանցից ոչ մեկի հետ չի կնքվել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Ջրային կոմիտեի գլխավոր
քարտուղարի պաշտոնակատար Սամսոն Զատիկյան

23 հուլիսի 2019թ.